



109. ԽԱԶ ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՉԱՐՈՒԽ ՓԱՇԵՆ

Ժամանակով մարդ ու կնիկ կէղնին. օր մե կնիկ կըսե մարդուն.

— Խազու խափամեն էփեր է, հազրր է, մինակ աստված սա՛ ուրիշ մարդ չիգա հարամ-ղարամ էնե վըր մըզի:

Խոսք կնկա բերան էր, մեկ լե մոտիկ դեղեն ուրանց ճանանչ բարեկամ մե ներս կը մտնա: Մարդ ու կնիկ յիրարու յերես իշկեցին ու սոս ու փոս նստան: Խափամի հոտ զտուն բոնեք էր, ճանչվորի բերնեն ջուր կը վաղեր, շատ բաքլա էրեց, խափամեն թունդրեն դուս չելավ: Չար-նաչար ճանչվոր հացի սեղան գողե, ուր խուրջուց հաց, դաթա, պանիր կը հանե պարդե վըր սեղնին, զտանտեր լե կը կանչե, մեկտեղ զհացն ու դաթեն, պանիր կուտին կը խլսցուն:

Յառջի աղօթըրնին ճանչվոր դելնա, ափշալափի կէրթա տաշտեն քանի մե լոշ կը բերե, սլուսկից զխազ կը հանե, կը փաթե մըջ լոջերուն, կը դնե մըջ խուրջուն, զուր շարքիններ կը հանե կոխե մըջ պուտկին, սորա զտանտեր դիմցու:

— Բարեկամ,— կըսե,— մանցի բարի, ես կէրթամ, մինակ մեկ-էրկու բան կը հարցում, կը խնդրիմ ըսիս, յիրկուն ժամանակ չէղավ, օր հարցուցենք... էն տարին, օր «խազ» թագավոր առավ «զխուրջին» քաղաք, մտավ մեջ, մի՛տքդ է:

— Չէ՛, միտքս չէ,— քնթաթախ պատասխան կիտա տանտիր:

— Խազ թագավորից յետե «չարուխ» փաշեն լե «զպուտուկ» քաղաքն առավ, մտավ մեջ, է՞դ լե քու միտք չէ:

— Չէ՛, վոլա, ըսկի միտքս չէ:

— Էն տարի ես շատ պզտիկ ենք, կափիկենք, ափշալափի կէր-
թենք տաշտից հաց կառնենք, կը բերենք. է՞դ լե միտքդ չէ: Դու
քա՞նի տարեկան էր:

— Ըսկի միտքս չէ:

— Օր հմալ է՝ դու շատ մտքամոլոր մարդ իս: Ինչօր է, մանցի
րարի, ես դացի:

— Էրթաս րարի,— կրսե տանտեր, ու կը դառնա վըր մեկել
կշտին:

— Դե, յանդըռի գնա, է՛,— կը մրթմրթա կնիկ,— բարով աղա-
տանք:

Լուսն օր կը լուսնա, մարդ ու կնիկ հժմըթքար կէղնին, կր տես-
նան օր, մըջ տաշտին լոշ չկա, մըջ պուտկին խաղ չկա: Մարդ զգլուխ
կր տանե ու կր բերե, կըսե.

— Օղորդ օր «չարուխ» փաշեն «զպուտուկ» քաղաք առեր է,
նստեր է մեջ, «խաղ» թագավոր լե ո՛ր դինա մկա ի՛նչ թաղա քա-
ղաքնէր է վերցուցի, նստեր է մեջ, քեֆ կէնե:

